

ԱՐՁԱՆԱՐԳՐՈՒԹՅՈՒՆ

Գեղարքունիք համայնքի 2011թ.-ի կատարված աշխատանքների հաշվետվություն

23.02.2012թ.

գ. Գեղարքունիք

Ս/թ փետրվարի 23-ին տեղի ունեցավ Գեղարքունիք համայնքի ընդհանուր ժողովը.

ՆԶախագահությամբ՝ համայնքի ղեկավար՝ Կ. Ասատրյանի
Քարտուղար՝ Ս. Ավետիսյան

Ժողովին մասնակցում էր համայնքի 75-80 բնակիչ, ինչպես նաև Գեղարքունիքի փոխնարգպետ Ա. Ղուկասյանը և Գեղարքունիքի մարզպետարանի տարածքային կառավարման վարչության գլխավոր մասնագետ՝ Գ. Օհանյանը:

Օրակարգում՝ - 1. Գեղարքունիք համայնքի 2011թ.-ի բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունը.

Ձեկուցող՝ համայնքի ղեկավար Կ. Ասատրյան

Համայնքի ղեկավարը նշեց, որ 2011թ.-ի սեփական եկամուտները նախատեսվել էր 8540.0 հազար դրամ փաստացի կատարվել է 8845.9 հազար դրամ կամ պլանը կատարվել է 103.6%-ով. այդ թվում.

1. Հողի հարկ – պլանը նախատեսվել է 5077.0 հազար դրամ, կատարվել է 5620.2 հազար դրամով կամ 110.7%-ով,
2. Գույքահարկ՝ շենքեր շինություններից – պլանը նախատեսվել է 300.0 հազար դրամ, կատարվել է 142.8 հազար դրամով կամ 47.6%-ով,
3. Գույքահարկ տրանսպորտային միջոցներից - պլանը նախատեսվել է 900.0 հազար դրամ, կատարվել է 1209.4 հազար դրամով կամ 134.4%-ով,
4. Տեղական տուրքեր - պլանը նախատեսվել է 135.0 հազար դրամ, կատարվել է 93.0 հազար դրամով կամ 68.9%-ով,
5. Տեղական վճարներ - պլանը նախատեսվել է 150.0 հազար դրամ, կատարվել է 62.5 հազար դրամով կամ 41.7%-ով,
6. Գույքի վարձակալությունից եկամուտներ - պլանը նախատեսվել է 1648.0 հազար դրամ, կատարվել է 1398.0 հազար դրամով կամ 84.8%-ով,
7. Այլ եկամուտներ - պլանը նախատեսվել է 330.0 հազար դրամ, կատարվել է 320.0 հազար դրամով կամ 96.9%-ով,

2011թ.-ին կատարվել է հետևյալ ծախսերը.

1. Ընդհանուր բնույթի համայնքային ծառայություններ - պլանը նախատեսվել է 22382.9 հազար դրամ, կատարվել է 21946.2 հազար դրամով կամ 98.0%-ով,
2. Տնտեսական հարաբերություններ - պլանը նախատեսվել է 15557.8 հազար դրամ, կատարվել է 14329.8 հազար դրամով կամ 92.1%-ով,
3. Շրջակա միջավայրի պաշտպանություն - պլանը նախատեսվել է 360.0 հազար դրամ, կատարվել է 145.0 հազար դրամով կամ 40.3%-ով,
4. Բնակարանային շինարարություն և կոմունալ ծառայություն - պլանը նախատեսվել է 1730.0 հազար դրամ, կատարվել է 1730.0 հազար դրամով կամ 100%-ով,
5. Մշակույթային միջոցառումներ - պլանը նախատեսվել է 415.0 հազար դրամ, կատարվել է 375.0 հազար դրամով կամ 90.4%-ով,
6. Կրթություն - պլանը նախատեսվել է 250.0 հազար դրամ, կատարվել է 250.0 հազար դրամով կամ 100.0%-ով,
8. Սոցիալական պաշտպանություն - պլանը նախատեսվել է 1500.0 հազար դրամ, կատարվել է 1280.0 հազար դրամով կամ 85.3%-ով,
9. Պահուստային ֆոնդ - պլանը նախատեսվել է 2921.2 հազար դրամ, կատարվել է 2914.2 հազար դրամով կամ 99. %-ով:

Ելույթ ունեցան համայնքի բնակիչներ՝ Գ. Այվազյանը, Դ. Ավետիսյանը Ս. Աբրահամյանը Ս. Ղազարյանը, Ա. Միրիբյանը, Շ. Ավետիսյանը, Գ. Մարտիրոսյանը:
Համայնքի ընդհանուր չողովի վերջում ելույթ ունեցավ Գեղարքունիքի փոխնարզպետ՝ Ա. Ղուկասյանը:

Համայնքի ընդհանուր ժողովը .

Ո Ր Ո Շ Ե Ց

Համայնքի 2011թ.-ի գործունեությունը գնահատել լավ:

Գեղարքունիք համայնքի ղեկավար՝

Կ. Ասատրյան

Քարտուղար՝

Ս. Ավետիսյան